ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ՝ ԺԱՄԸ 11:00-ԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ և ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը ՈՐՈՇԵՑ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝ 2024 թվականի ապրիլի 16-ին՝ ժամը 11:00-ին, Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու եւ «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-797-15.03.2024-ՄԻ-011/0) առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկելու վերաբերյալ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքը թույլատրում է անհրաժեշտության դեպքում օրենքի նախագիծն առաջին և երկրորդ ընթերցմամբ քննարկել արտահերթ նիստերում:

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում բացակայում է որեւէ կարգավորում 2014թ. Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

հիշատակի վերաբերյալ, նույն օրենքի 15.1-ին հոդվածի համաձայն՝ Ցեղասպանությունների դատապարտման եւ կանխարգելման օրը նշվում է դեկտեմբերի 9-ին:

Հարկ է նկատել, որ հայ ժողովրդի հետ դարեր շարունակ ապրող եզդի ազգի նկատմամբ 2014թ. «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից կատարված ցեղասպանության դրսեւորումը՝ որպես առանձին հիշատակի օր նշելը եւ այն առանձնացնելը՝ հայ ժողովրդի հետ համատեղ համընդհանուր թշնամու դեմ պայքար մղած ՀՀ ամենամեծ ազգային փոքրամասնության՝ եզդիների նկատմամբ համերաշխության լրացուցիչ դրսեւորում է, որը կունենա եւ՛ կանխարգելիչ, եւ՛ ըստ էության դատապարտող նշանակություն:

Խնդիրն առավել սրդիական է դառնում նաեւ այն առումով, որ վերջին ժամանակահատվածում նոր թափ է ստացել եզդի ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանությունը ճանաչելու գործընթացը, մասնավորապես՝ 2023թ. հունվարին Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը միացավ հանուն պատմական արդարության վերականգնման պայքարին՝ ճանաչելով եւ դատապարտելով 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանությունը:

2023թ. օգոստոսի 1-ին Մեծ Բրիտանիան ճանաչել է «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից եզդիների դեմ իրականացված ցեղասպանությունը: Մեծ Բրիտանիայի որոշումը հետեւել է Գերմանիայի արդարադատության դաշնային դատարանի որոշմանը, որն Իսլամական Պետության նախկին մարտիկին մեղավոր է ճանաչել ցեղասպանության եւ ռազմական հանցագործությունների համար: Իսկ

Հայաստանի խորհրդարանը 2014թ. եզդի ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչել է դեռեւս 2018թ. հունվարին:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

12.04.2024թ.